Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ «_____» 2025թ. N-----Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 265-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ 27-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ «Ա» ԵՎ «Բ» ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Կասեցնել Երևան քաղաքի ավագանու՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 265-Ն որոշման Հավելվածի 27-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների գործողությունները՝ մինչև «Երևան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 43-Ն որոշման Հավելվածի 29-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները՝ դրանք ուժի մեջ մտնելու պահից, անվավեր ճանաչելու պահանջի մասին 21.02.2024 թվականին Երևան քաղաքի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության կողմից ներկայացված դիմումի մասով դատավարության ավարտը և դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-ի N 265-Ն ՈՐՈՇՄԱՆ 27-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ «Ա» ԵՎ «Բ» ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն նախագծով առաջարկվում է կասեցնել 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Երևան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 265-Ն որոշման 27-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների գործողությունները՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, քանի որ 2024 թվականի փետրվարի 21-ին Երևան քաղաքի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցությունը դիմում է ներկայացրել դատարան՝ «Երևան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» 26.12.2023 թվականի թիվ 43-Ն որոշման Հավելվածի 29-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունները՝ դրանք ուժի մեջ մտնելու պահից, անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/1822/05/24 վարչական գործի շրջանակում 2024 թվականի դեկտեմբերի 19-ին կայացրած վճռով բավարարել է:

ՀՀ վարչական դատարանը նշել է, որ տեղական վճարի դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմնի՝ տվյալ դեպքում Երևան քաղաքի ավագանու կողմից պետք է սահմանվեն բացառապես հիմք ընդունելով մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ ծախսերի չափով համապատասխան փոխհատուցում ստանալու հանգամանքը, այլ ոչ թե՝ Երևան քաղաքի կենտրոնի բեռնաթափումը:

2024 թվականի դեկտեմբերի 24-ին N 265-Ն որոշման 27-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններով ավտոկանատեղիների դրույքաչափերը որևէ փոփոխություն չեն կրել՝ հաշվի չառնելով ՀՀ վարչական դատարանի դատավորների կոլեգիալ կազմի վճիռը և ներպետական օրենսդրությամբ տեղական վճարների դրույքաչափերին ներկայացվող պահանջները, սակայն առկա է դատական վեճ՝ վերը նշված հարցով և առաջին ատյանում առկա դրույքաչափերը չեղարկվել են՝ Երևան քաղաքի ավագանու որոշման անհրաժեշտ և օրինական հիմնավորվածության բացակայության պատճառով:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, Երևան քաղաքի ավագանուն առաջարկվող որոշման նախագիծն անհապաղ պետք է ընդունել և կասեցնել առկա դրույքաչափերի գործողությունները՝ մինչև դատավարության ավարտը և դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան